ջերմ, ամառային օրերում մարդ հեռոից նայում է Սալմաստայ պայծառ արեգակի ճառագայթներով լուսաւորոած հովտին, տեսնում է դաշտերը, մշակոած աշխատասէր ձեռքով, խոստանում են առատ հունձք. — տեսնում է՝ ցորեանը, գարին, բրինձը, բամբակը եւ ընդեղէնների ամէն տեսակները, իրանց բեղմնաւորութեամբ ներկայացնում են խիստ գոհացուցիչ առատութիւն. տեսնում է՝ մրգաբեր այգիները լիացած են պտուղների ամենաազնիւ տեսակներով. — տեսնում է՝ խոտաւէտ արօտամարգերի վրայ արածում են տաւարների նախիրներ եւ ոչխարների հօտեր, — մի խօսքով, նա տեսնում է, որ բնութիւնը անխնայ առատութեամբ թափել է այստեղ իր հարստութիւնները: Նա սկսում է մտածել. «որքա՜ն բախտաւոր ապրում են այստեղ մարդիկ»... Իսկ այդ ճոխութիւնները, բնութեան այդ պարգեւները չեն պատկանում այն բիւրաւոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրայ, արեւի կրակոտ բոցերի մէջ քրտինք են թափում:

Ահա գիւղերում, այստեղ եւ այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով եւ ատամնաւոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրայ, նրանց մէջ բնակւում են «աղաները» իրանց ախտերով եւ մոլութիւններով, — ահա նրանց է պատկանում երկրի բոլոր բեղմնաւորութիւնը, նրանք են շռայլում մշակ մարդու աշխատաւոր ձեռքի վաստակը:

Երեխայութեանս ժամանակ, երբ ես որեւիցէ անկարգութիւն էի անում, տատս եւ մայրս ամէն մէկը իր առանձին եղանակն ունէր ինձ սաստելու, որ վախենամ եւ հանգիստ կենամ: Տատս ասում էր. «սու՛ս, սու՛ս, մարդագելը եկաւ, քեզ կը տամ կուտի»: — Մայրս ասում էր. «Ձէնդ կտրի՛, թէ չէ, ֆերրաշին կը կանչեմ»... Թէ առաջին եւ թէ վերջին սպառնալիքը իմ վրայ միօրինակ ազդեցութիւն էին գործում. ես ֆերրաշից նոյնքան էի վախենում, որքան գայլից: Բայց երբ փոքր-ինչ մեծացայ, մարդագայլից այլեւս չէի վախենում, որովհետեւ հասկանում էի, թէ մարդը գայլ չի դառնայ, բայց ֆերրաշի երկիւղը երբեք դուրս չեկաւ իմ սրտից... Ինձ թւում է, որ այս րոպէիս էլ լսում եմ նրա մտրակի ձայնը ինձ թւում է, թէ իմ ականջին զարկում են գիւղացու ցաւալի հառաչանքները, եւ ես տեսնում եմ նրան թուլացած, ուշաթափ եղած հարկապահանջի անգութ գանահարութիւնից...

Քեռուս տունը, ուր տեղափոխոեցանք մենք, մեզ հասած դժբախտութիւնից յետոյ, գտնւում էր Քօհնայ-Շահարում: Քօհնայ-Շահար նշանակում է հին քաղաք. այսպէս կոչում էին նրան Սալմաստայ նոր քաղաքից որոշելու համար, որի անունը Դիլիման էր: Հին քաղաքը կորցրել էր իր անունը: Շատ հաւանական է, որ դա լինէր մեր Զարեհաւանը կամ Զարեւանդը, որի անունով մի ժամանակ կոչւում էր ամբողջ գաւառը: